



# Ազդարարության Trumpet's Sound փող

56-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ  
ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2025





# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: pastor@armenianbrethren.org  
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ ԵՐԿԱՄՍՅԱ ՔԵՐՔՐ ԵՒՂՆԵՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԵՔԱՅՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՐԱՏԱՐԱԿՈՒՔՅՈՒՄՆ Է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վախը . . . . . Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Նա սովորեցրեց նրանց. . . . . Նելլ Բուբման

Ութ հարց. . . . . Դոն Սթորմր

Եկեղեցու կառուցումը (1). . . . . Ջորջ Հաուբ

Ներման բերկրանքը . . . . . Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Ապաշխարեցե՛ք և Ավետարանին հավատացե՛ք . . . Քաղված

Վանաձորը՝ ուշադրության կենտրոնում . . . . . Դոկտ.՝ Դանիել Ջեյմս

## Վախը

Ի՞նչ է վախը: Արդյոք դա պարզապես հո՛ւյզ է, զգացո՛ւմ, թե՛ ավելի՛ն է: Մենք վախենում ենք ամենօրյա լուրերից: Վախենում ենք, երբ տեսնում ենք, թե ինչպես է փոխվում մեզ շրջապատող աշխարհը: Վախենում ենք մեր մարմնի ամենօրյա փոփոխությունից. մազերն ավելի են սպիտակում, դժվարանում ենք լսել, տեսնել...:

Կյանքում որևէ փոփոխություն կամ պարզապես անսպասելի իրավիճակ, լինի աշխատավայրում, ընտանիքում, բերում է անհանգստություն ու վախ:

Տեր Հիսուսը խոսեց թռչունների մասին՝ ասելով. *«Նայեցե՛ք երկնքի թռչուններին, որոնք ո՛չ ցանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ ամբարների մեջ հավաքում, բայց ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց: Մի՞թե դուք դրանցից ավելի լավ չեք: Ձեզանից ո՛վ կարող է հոգս անելով մեկ կանգուն ավելացնել իր հասակի վրա»* (Մատթ. 6:26-27):

Դավիթ թագավորն փնտրում էր Տեր Աստծուն ամեն օր. *«Փնտրեցի Տիրոջը, ու ինձ լսեց և իմ բոլոր վախերից ինձ ազատեց: Նրան նայեցին ու լուսավորվեցին, և նրանց երեսները ամոթով չծածկվեցին: Այս խեղճ մարդն աղաղակեց, ու Տերը լսեց և նրան փրկեց իր բոլոր նեղություններից: Տիրոջ հրեշտակը բանակ է դնում Նրանից վախեցողների չորսբոլորը ու փրկում է նրանց: Օ՛, ճաշակեցե՛ք ու տեսե՛ք, որ Տերը բարի է: Օրհնյալ է այն մարդը, որ Նրա վրա է դնում հույսը»* (Մաղ. 34:4-8):

Կյանքում կարող են այնպիսի իրավիճակներ առաջանալ, երբ մենք Տիրոջ անմիջական օգնության կարիքը կունենանք: Երբ հետ եմ նայում, երբեք չեմ մոռանում այն իրավիճակները, երբ կանչել եմ Տիրոջը, ու Նա մեկն է Իր ձեռքը՝ փրկելու ինձ: Այդ իրավիճակների հետքն անգամ չի մնացել իմ կյանքում:

*«Տերն իմ գործությունն ու վստահան է. իմ սիրտը Նրան հուսաց, ու ես օգնություն գտա: Ուստի սիրտս մեծապես հրճվում է. և իմ երգով ես Նրան եմ փառաբանելու»* (Մաղ. 28:7):

Ուրեմն համարձակ եղեր: Նա պատրաստ է օգնելու նաև ձեզ:  
Պարզապես կանչե՛ք Նրա անունը: Տերը կարող է օգնել ձեզ:

Հ. Գ.

## **Նա սովորեցրեց նրանց**

*Մատթեոս 5-րդ գլուխ*

### **Մաս 1. Ամբոխում**

Պատկերացրե՛ք, թե ապրում եք մի ժամանակաշրջանում, երբ կարող էիք մահանալ տենդի պատճառով, երբ կյանքը կարճ էր ու ծանր, իսկ մարդիկ՝ անհույս: Պատկերացրե՛ք, թե լսում եք մի Մարդու մասին, ով ձրի բժշկում է բոլոր նրանց, ովքեր իրենց հիվանդություններով և տանջանքներով Իր մոտ են գնում՝ անկախ հիվանդության կամ տանջանքի տեսակից: Պատկերացրե՛ք, թե լսում եք մի Մարդու մասին, ով ընդամենը մեկ խոսքով ազատում է դևերով բռնված մարդկանց: Մտածե՛ք այն ուրախության մասին, որը Նա բերեց, քանի որ կոտորված և մաշված մարմինները բժշկվեցին, կյանքեր փրկվեցին: Հուսահատությունը փոխարինվեց գոհությամբ ու զարմանքով, սուգը վերածվեց պարի: Ամբողջ խոսակցությունը Նազարեթից եկած Մարգարեի մասին է: Պատկերացրե՛ք, թե գտնվում եք այն բազմության մեջ, որը գնում է դեպի Հիսուսը:

Դուք տեսնում եք Նրան՝ նստած բլրի լանջին, աշակերտներին՝ հավաքված Նրա շուրջը: Հետաքրքրասեր ամբոխը շրջապատում է նրանց՝ ուշադիր լսելով Նրա յուրաքանչյուր խոսքը:

*«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը»:*

Նրա արտասանած առաջին բառերը հնչում են այնքան նոր, այնքան հուսադրող, այնքան տարբեր այն ամենից, ինչ երբևէ լսել էին: Ինչպես Նրա բուժիչ հպումը գորություն ուներ վերականգնելու հիվանդ մարմինները, այնպես էլ հիմա Նրա խոսքերը վերականգնում են վիատված և խավարած հոգիների հավատքն ու հույսը:

Այս հասարակ մարդկանց համար Աստծո Օրենքը նման էր բարձր

սարի, որի վրա հնարավոր չէր բարձրանալ: Նրանք աստվածաշնչագետներ չէին, որպեսզի ուսումնասիրեին Մովսեսի գրվածքների բոլոր բարդությունները, ուստի մարգարեների խոսքերը վախեցրին և շփոթեցրին նրանց: Ամեն շաբաթ ժողովարաններում դպիրների և փարիսեցիների ուսմունքը նրանց ավելի ծանրաբեռնում էր և բոլորովին չէր օգնում:

*«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը»:*

Ինչպես սառը ջուրը՝ ծարավ հոգուն, գով օդը՝ մարդաշատ սենյակում, այնպես էլ այս խոսքերը հրաշալի էր լսել: Ամբոխում կար առօրյայի պահանջներից հոգնած մի ժողովուրդ, աշխատող տղամարդիկ ու կանայք, որոնք ամբողջովին զբաղված էին իրենց ընտանիքներն ապահովելու գործով: Նրանք չէին կարող պարծենալ մեծ ձեռքերումներով, կրթությամբ կամ առաքինությամբ: Նրանք իսկապես հոգով աղքատ էին, բայց մի՞թե Նա ասում էր, որ այդպիսիք կժառանգեն Երկնքի արքայությունը: Ինչպե՞ս կարող էր դա լինել: Չէ՞ որ նրանք խախտել էին անհամար օրենքներ, չէին պահել սուրբ օրը և ընծաներ չէին բերել տաճար: Ի՞նչ կասեք այդ ամենի մասին:

*«Երանի՛ նրանց, որ ողբում են, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:*

Կային այնպիսիք, ովքեր դառնացած էին և վրդովված՝ իրենց բաժին հասած կյանքի համար: Բայց կային ուրիշներ, ովքեր ողբում էին իրենց ընկած պետության և ազգի ողորմելի վիճակի համար, որը ժամանակին ազատ ու բարգավաճ էր, բայց հիմա՝ կապված և շահագործված Հռոմի կառավարիչների կողմից: Նրանց Նա տվեց մխիթարության խոստումը: Նրանց աղոթքներն ու արցունքները հիշված են և կպատասխանվեն:

*«Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն»:*

Հռոմն արհամարհում էր թուլությունը և փառաբանում իր զորությունն ու նվաճումները: Արդյո՞ք հեզերը, խոնարհները, Աստծուն ամեն ինչում հնազանդվողները կժառանգեն երկիրը: Ինչպե՞ս կարող է դա լինել:

*«Երանի՛ նրանց, որ արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագնան»:*

Յուրաքանչյուր անձ, եթե մի պահ քննի սեփական սիրտը, շուտով կհայտնաբերի հպարտության տարբեր մակարդակներ և Աստծո դեմ կատաղի ապստամբություն, որը ցնցում է մարդու միտքը: Մենք կարող ենք արդարության քաղց ունենալ, բայց որտեղի՞ց այն կգա: Լույսը չի կարող դուրս գալ խավարից: Դարձյալ նրանք լուսւմ են Նրա տարօրինակ խոստումը, որ այդպիսի քաղցը կհազեցվի:

Այս խոսքերով Նա նրանց առջև դրեց մի հոգու պատկեր, որն աղքատ, վշտացած, հեզ, հնազանդ և Աստծո արդարությունը տենչող է: Այս հոգին ոչ մի կերպ չէր արժանանում հարուստների, ազգի կառավարիչների, կրոնական առաջնորդների և ապաստվոր քահանաների ուշադրությանը: Այս հոգին անսահման օրհնված էր, և հենց նրան ուշադրություն դարձրին երկնքի աչքերը:

Եթե այդ օրն ամբոխում լինեիք, ապա ինչպե՞ս կարձագանքեիք այս ապշեցուցիչ խոսքերին: Արդյո՞ք կհեռանայիք՝ ծաղրելով այն, ինչ ձեր կարծիքով անիմաստ իդեալիզմ է, թե՛ անդիմադրելիորեն կձգվեիք դեպի Նա՝ ավելին լսելու, ավելին իմանալու և Նրա հավիտենական կյանքի խոսքերն ավելի լավ հասկանալու:

Նեյլ Բուքման

## ***Ութ հարց***

*Մադաբիա 1-3*

**Մ**ադաբիայի ժամանակակիցները հարցեր էին տալիս, որոնք բացահայտում էին իրենց հոգևոր անարատության բացակայությունը: Նրանք բավարարված էին իրենց արդարությամբ՝ չկարողանալով գիտակցել, թե որքան հեռու են Աստծուց: Մենք պետք է մտածենք նրանց հարցերի մասին և Տիրոջ առջև քննենք ինքներս մեզ, քանի որ այդպիսի վերաբերմունքը կարող է հեշտությամբ ներթափանցել մեր մեջ:

**«Ինչո՞վ ես սիրել մեզ» (1:2)**

Մադաբիայի մարգարեությունը սկսվում է Տիրոջ հայտարարությամբ՝ «Ես ձեզ սիրել եմ»: Ժողովուրդն իսկույն հարցրեց. «Ինչո՞վ ես

*սիրելի մեզ*»: Ահա մարդիկ, ովքեր չկարողացան գիտակցել, որ միայն Աստծո սիրո շնորհիվ են կյանք ստացել: Աստծո սերը նրանց հանդեպ դրսևորվեց Հակոբի ընտրությամբ, ումից գալու էր Մեսիան: Աստված նաև պահպանել էր նրանց՝ ի տարբերություն Եսավի սերնդի:

### **«Ինչո՞վ ենք անարգում Քո անունը» (1:6)**

Ամենակարող Տեր Աստծո անունն անարգելը մի բան է, որից պետք է սարսափենք: Քահանաներն անդադար անարգում էին Տիրոջ անունը՝ զոհասեղանի վրա պիղծ ուտելիք մատուցելով: Այսպիսով, նրանք տվեցին երրորդ հարցը:

### **«Ինչո՞վ ենք Քեզ պղծում» (1:7)**

Երբ Աստված մեղադրեց քահանաներին զոհասեղանի վրա պիղծ ուտելիք մատուցելու մեջ, նրանք հարցրին, թե ինչո՞վ են պղծել Նրան: Պատասխանը հետևյալն էր. նրանք չէին մատուցում իրենց լավագույն կենդանիները: Քահանաները միացել էին այն մարդկանց, ովքեր թերի զոհաբերություններ էին մատուցում: Նրանք պետք է մերժեին զոհաբերության բերված կենդանիներին, սակայն ընդունում էին այն մարդկանց զոհաբերությունները, ովքեր ծեր, հիվանդ և արատավոր կենդանիներ էին բերում Աստծուն՝ Մովսեսի սովորեցրածի պես անելու փոխարեն: Աստված պահանջեց, որ զոհաբերությունը անարատ կենդանի լինի:

Մենք չարաչար մոլորված ենք, եթե կարծում ենք, թե կարող ենք Աստծուն նվիրել այն, ինչ ավելորդ է մեզ համար: Մենք ժամանակը վատնում ենք՝ անելով այն, ինչ հաճելի է մեզ համար, իսկ կիրակի օրը մեկ ժամ տրամադրում ենք Աստծուն: Մենք ծախսում ենք գումարը մեզ հաճույք պատճառող բաների վրա և մի քանի մետաղադրամ զգում եկեղեցու գանձանակի մեջ: Եթե այդպես ենք անում, ուրեմն ավելի լավը չենք, քան խրայելացիները, որոնց ասվել էր, որ Տիրոջ սեղանը պղծված է:

### **«Ինչո՞ւ այդպես» (2:14)**

Աստծուն չէր գոհացնում այն կյանքը, որով ապրում էին մարդիկ, հատկապես տղամարդիկ: Նրանք բաժանվում էին իրենց կանանցից և ամուսնանում հեթանոս կանանց հետ: Այնուհետև հասկանալով,

որ Աստված չի ընդունում նրանց գոհաբերությունները, արցունքով և կեղծ ապաշխարությամբ ծածկում էին գոհասեղանը և հարցնում, թե ինչու Աստված չընդունեց իրենց:

Միայլ կա, եթե չենք կարողանում տեսնել, թե ինչը հաճելի չէ Աստծո համար մեր կյանքում: Այս տղամարդիկ այնքան էին կուրացել իրենց մեղքի հանդեպ և այնքան հեռու էին Աստծո պահանջներից, որ չէին կարողանում պատկերացնել, թե ինչու Աստված գոհ չէր իրենցից: Նրանք ամուսնալուծվում էին՝ օտար կնոջ հետ ամուսնանալու համար և զարմանում, թե ինչու Աստված գոհ չէ:

Աստված ասում է ամուսնալուծությունը: Կորնթացիներին ուղղված առաջին նամակում Պողոսը չամուսնալուծվելու հրահանգ է ուղղում հավատացյալ ամուսնական զույգին: Եթե կինը թողնել ամուսնուն, նա պետք է ամուրի մնար կամ հաշտվեր ամուսնու հետ: Մենք չպետք է ազդվենք մեզ շրջապատող աշխարհի չափանիշներից, այլ պետք է հետևենք Աստծո պատվիրաններին մեր կյանքի համար:

### **«Ինչո՞վ ենք ձանձրացնում» (2:17)**

Ժողովուրդն իր ասածներով հոգնեցնում էր Տիրոջը և հետո հարցնում, թե ինչով են հոգնեցնում կամ ձանձրացնում Նրան: Նրանք շեղվել էին իրենց չափանիշներից՝ ասելով, որ չարիք գործողները բարի են Տիրոջ առաջ: Այս վերաբերմունքը շատ տարածված է մեր օրերում: Մեր հասարակության մեջ շատերը մերժել են բացարձակների նկատմամբ որևէ հավատ և ասում են, թե բոլոր տեսանկյուններն ընդունելի են: Ըստ նրանց՝ եթե մարդն իրեն հարմարավետ է զգում, ուրեմն նրա արարքը ճիշտ է: Բայց մենք հաճախ նկատում ենք, որ այդպես մտածողներն ակնկալում են, որ մենք համապատասխանենք իրենց խեղաթյուրված մտածելակերպին: Աստված և Իր չափանիշները չեն փոխվում (3:6):

### **«Ի՞նչ բանում ես դառնանք» (3:7)**

Քանի որ Աստված անփոփոխ է, Նա պահեց Իր ուխտը, որ կնքել էր Աբրահամի հետ, և այդ պատճառով իսրայելացիները չկործանվեցին: Թեև նրանք հեռացել էին Իր ճանապարհներից, Նա դեռ կանչում էր նրանց՝ Իր մոտ վերադառնալու: Նրանք հարցրին, թե ինչ ճանապարհով պետք է վերադառնան:

Մա տխուր իրավիճակ է: Մարդիկ հեռացել էին Տիրոջից, հեռացել էին Նրա արարողություններից, սակայն դեռ գոհեր էին մատուցում: Նրանք կարծում էին, թե ճիշտ են անում: Ինչի՞ն պիտի վերադառնալին: Խնդիրն այն էր, որ նրանց մտահոգում էր միայն երկրպագության արարողակարգը: Նրանց սրտերն ամբողջությամբ չէին փնտրում Տիրոջը: Եվ դրա պատճառով նրանք չգիտեին, թե ինչպես վերադառնան Տիրոջը:

Մենք այսօր նայում ենք ինքներս մեզ և հարցնում, թե արդյո՞ք անկեղծ ենք Տիրոջ առջև՝ մեր երկրպագության և ծառայության մեջ, թե՞ պարզապես արարողակարգերով ենք հետաքրքրված:

### «Ինչո՞վ ենք քեզ թալանել» (3:8)

Մարդիկ ապրում էին իրենց համար և չէին մտածում ունեցվածքից (կամ ժամանակից) Տիրոջը տալու մասին: Աստված սա տեսավ որպես կողոպուտ, նույնիսկ եթե նրանք իրականում ոչինչ չէին գողանում տաճարից: Այն ամենը, ինչ ունենք, ի վերջո պատկանում է Տիրոջը: Արդյո՞ք մենք տալիս ենք Նրան այն, ինչ Նրան է պատկանում:

### «Ի՞նչ ենք ասել Քո դեմ» (3:13)

Ութ հարցերից վերջինն առնչվում է Աստծուն ծառայելու նրանց վերաբերմունքին: Աստված նկարագրեց նրանց խոսքերը որպես Իր դեմ խիստ հնչած խոսքեր: Իրականում նրանք ասում էին, որ անօգուտ է Տիրոջը ծառայել: Նրանք ակնկալում էին որոշակի օգուտ իրենց ծառայության համար: Այնուամենայնիվ, այն ամենը, ինչ ունեին, եկել էր հենց Տիրոջից: Մի՞թե նրանք պատրաստակամորեն չէին կարող տրամադրել իրենց ժամանակը և ունեցվածքը ծառայության համար:

Բայց եկեք ինքներս մեզ հարցնենք, թե որքան պատրաստակամորեն ենք նվիրում Տիրոջը: Արդյո՞ք Տիրոջը ծառայում և նվիրում ենք՝ սիրո՞ւց դրդված, թե՞ վարձատրության ակնկալիքով:

Ոչ բոլոր իսրայելացիներն էին այդպիսին: Կարդում ենք (3:16), որ նրանք, ովքեր վախենում էին Տիրոջից, խոսեցին իրար հետ, և Տերն ունկնդրեց ու լսեց նրանց: Նրա առջև գրվեց հիշատակի գիրք: Աստված տեսնում է Իր համար մեր կատարած ծառայությունը և օրհնում է նրանց, ովքեր ծառայում և երկրպագում են Իրեն ամբողջ սրտով:

Թող որ լինենք նրանցից, ովքեր որոշում են հավատարմորեն և լավ ծառայել Նրան:

Դոն Սթոքմըր

## **Եկեղեցու կառուցումը (1)**

*Գործք Առաքելոց 1-12*

### **Եկեղեցու հիմքը**

Վերջերս կանանց նկատմամբ բռնության, իշխանության չարաշահման և անարդարության դեմ երթեր և ցույցեր տեղի ունեցան: Այս խնդիրների շարունակական բնույթը ցույց է տալիս, որ մարդկային հարաբերությունները թերի են, և մենք չենք կարող դրանք վերականգնել: Սա Աստծո դեմ մեր ապստամբության ախտանիշն է: Բայց Հիսուսի մեջ կարելի է գտնել այն արդարությունը, որին ձգտում ենք: Հիսուսի միջոցով Աստծո հետ ճիշտ հարաբերություններ ունենալով՝ կարող ենք նոր կյանք ձեռք բերել: Եկեղեցիները կան, որոնք սովորեցնում են կարողանալ ուրիշների հետ ապրել և առողջ մարդկային հարաբերություններ զարգացնել:

Եթե ուզում եք վաղ եկեղեցու մասին իմանալ, ապա մի՛ նայեք Հին Կտակարանին, քանի որ եկեղեցին այդ ժամանակ գոյություն չուներ: Եվ մի՛ նայեք Ավետարաններին (Մատթեոս, Մարկոս, Դուկաս և Հովհաննես), քանի որ եկեղեցին այդ ժամանակ էլ գոյություն չուներ: Եկեղեցու գոյությունը սկսվել է Հիսուսի՝ Երկինք համբարձվելուց 10 օր անց: Մենք պետք է սերտենք Գործք Առաքելոց գիրքը, որտեղ կտեսնենք, որ Աստծո վկաները տարածում են Ավետարանի ուղերձը և ամենուր եկեղեցիներ հիմնում:

### **Համատեսքստ**

Հրեա Մեսիան խոստացվել էր Հին Կտակարանում, և Ավետարանները պատմում են Նրա՝ երկիր գալու մասին: Մուրբ Հոգին խոստացվել էր Ավետարաններում, և եկավ՝ ապրելու հավատացյալների մեջ, ինչի մասին գրված է Գործք Առաքելոց գրքում:

Հին Կտակարանը նկարագրում է Աստծո և հրեա ժողովրդի հարաբերությունները մինչև մ.թ.ա. 400թ.-ը, իսկ Նոր Կտակարանը՝ Հիսուսի և Նրա հետևորդների պատմությունը, և թե ինչ է նշանակում հետևել Հիսուսին: Ավետարանները նկարագրում են Հիսուսի կյանքը, իսկ Գործք Առաքելոցը՝ եկեղեցու առաջին 30 տարիները: Այն գրված է քրիստոնյաներին վաղ եկեղեցու մասին կրթելու համար:

Գործք Առաքելոցը գրվել է Ղուկասի կողմից, ով Պողոսի ընկերակիցն էր (Կող. 4:10-14, Բ Տիմ. 4:11, Փիլիպ. 24): Ուստի Ղուկասը սկզբնական աղբյուրներից տեղեկացված էր Հիսուսի հետևորդների և նրանց պատգամի մասին: Նա գիտեր նրանց պատմությունը: Ղուկասը հավանաբար հեթանոս էր, բայց ծանոթ էր հրեական հավատքին:

Գործք Առաքելոցի իրադարձությունները տեղի են ունենում Մերձավոր Արևելքում և Միջերկրական ծովի շրջակա երկրներում: Հռոմեական կայսրությունն իշխանություն ուներ և ժողովրդից պահանջվում էր ընդունել կայսեր և հռոմեական աստվածների գերազանցությունը:

Հիսուսը և առաքյալները հրեա էին: Իսկ վաղ եկեղեցու անդամները՝ հրեա կամ հրեա պրոգելիստներ (առաջին դարում հուդայականությունն ընդունողներ): Նրանք դեռ հետևում էին հրեական շատ սովորությունների և գնում էին հրեական տաճար ու ժողովարաններ, քանի որ եկեղեցական շենքեր չկային (տներից բացի):

Քրիստոնյաները և անհավատ հրեաները տարակարծիք էին Հիսուսի անձի և գործի վերաբերյալ: Եկեղեցին հայտարարեց, որ Հիսուսը հրեա Մեսիան է, ով հաղթել է մահին ու վերականգնում է ողջ արարչագործությունը՝ սկսած Իր իսկ հարությունից: Բայց անհավատ հրեաներն անհնարին էին համարում, որ որպես հանցագործ խաչված Մարդը խոստացյալ Մեսիան լիներ: Այս տարբերությունը խզում առաջացրեց քրիստոնյաների և ոչ քրիստոնյա հրեաների միջև, որը շարունակվում է նաև այսօր:

Վաղ շրջանի քրիստոնյա հրեաները կարծում էին, որ բոլոր հեթանոսները հեթանոս են, բայց նրանք աստիճանաբար հասկացան, որ Քրիստոսին հետևող հեթանոսները պետք է լիարժեք կարգավիճակ ստանան քրիստոնեական եկեղեցում:

## Ներման բերկրանքը

Սաղմոս 32

**Դ**ավիթ թագավորի կյանքը հաջողության և փառքի կյանք էր, քանի դեռ նա չէր դարձել անհոգ ու ծույլ, տեղի չէր տվել գայթակողությանն ու չէր ընկել անառակության և մարդասպանության մեղքերի մեջ: Նա նույնիսկ մեկ տարի համբերությամբ թաքցրել էր եղելությունը:

Այնուհետև Աստված Նաթան մարգարեի միջոցով խոսել էր Դավթի հետ, ու նա խոստովանել էր իր մեղքը: Դավիթը 32-րդ Սաղմոսն սկսում է՝ ընդունելով Աստծո ներումը, հետո տեսնում ենք, թե ինչ երեք փուլերով է նա անցնում:

### ՉԽՈՍՏՈՎԱՆԱԾ ՄԵՂՔԻ ԳԱՏՃԱՌԱԾ ՑԱՎՐ

Ի՞նչ եղավ Դավթին, երբ նա չէր ընդունում ու չէր խոստովանում իր մեղքերը: Նա հոգևոր ու ֆիզիկական տառապանքներ կրեց և ծեր մարդու նման ուժասպառ եղավ:

Նմանօրինակ ախտանշաններ (մտահոգություն, մտավոր հոգնածություն և այլն) ունեցող մարդիկ բժշկի են դիմում, մինչդեռ նրանց խնդիրը չխոստովանված մեղքն է: Այդպիսի ցավը բուժող միակ բժիշկը Աստված է:

### ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԵՐՍԱՆՔՈՎ

Դավիթը վերջապես խոստովանեց, որ մեղք է գործել: Նրա աղոթքը ոչ թե ընդհանուր խոստովանություն էր, այլ նա իր մեղքը կոնկրետ անվանեց, իսկ Աստված, ով հավատարիմ է իր խոստմանը, ներեց նրան:

*«Ո՛ր է, Աստված, քեզ նման անօրինություն վեր առնող և իր ժառանգության մնացորդի մեղքից անց կենող, որ չի պահում իր բարկությունը հավիտյան, որովհետև նա ողորմություն սիրող է» (Միք. 7:18):*

*«Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը ների և սրբի մեզ ամեն անիրավությունից: Եթե ասենք, թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում նրան, և նրա խոսքը մեր մեջ չէ» (Ա Հովհ. 1:9):*

## ՆԵՐՄԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Դավթի հառաչանքը երգի վերածվեց. նա սկսեց ուրախ երգեր երգել. անդադար երգելու կարիք էր զգում: Մի ժամանակ որ կողմ շըրջվում էր, իր մեղքերն էր տեսնում: Դավիթն այլևս չէր վախենում, որովհետև Աստված էր նրան սատարում: Հիշե՛ք, որ ներված ու մաքրված լինելը կատարելություն և անփոթորիկ նավարկություն չի երաշխավորում: Սատանան անդուլ կերպով փորձում է կործանել հավատացյալի կյանքն ու նրանից խլել խաղաղությունն ու վստահությունը, հավատացյալն սկսում է անհանգստանալ իր անցյալի մեղքերով ու դրանց հետևանքներով:

Հնազանդությունն ունի դառը պտուղներ, ինչպես համոզվեց Դավիթը, սակայն 10-րդ և 11-րդ համարները մեզ հավաստիացնում են, որ Աստված պաշտպանում և պահպանում է նրանց, ովքեր իրեն են պատկանում: Անիրավ մարդիկ շատ տառապանք ունեն, իսկ մաքրված ու ներված հավատացյալը վայելում է Աստծո սիրառաստ քաղցրությունն ու ողորմությունը:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

## Ապաշխարեցե՛ք և Ավետարանին հավատեցե՛ք

Ոչ բոլորը գիտեն, թե ինչ է նշանակում ապաշխարություն: Այս բառի իմաստը հասկանալու համար եկե՛ք դիմենք Աստվածաշնչին: Ապաշխարությունը հավատքի հետ կապված զանազան հարցերի նկատմամբ պարզապես հայացքի փոփոխություն չէ, ինչը պարզ երևում է վերոնշյալ համարից: Դա պարզապես համաձայնություն չէ այն փաստի հետ, որ չարություն ես գործել: Երբ Պետրոսը քարոզեց մարդկանց (Գործք 2), նրանք *«իրենց տրտևրում գոջացին»* (հմբ 37), այդուհանդերձ, նա ապաշխարության կոչ ուղղեց (հմբ 38): Դա ավելին է, քան գործած մեղքերի համար տրտմելը (հմմտ. Բ Կորնթ. 7:10): Բացի այդ դա նույնը չէ, ինչ դարձի գալը. Պետրոսը՝ դիմելով մարդկանց, ասաց. *«Ապաշխարեցե՛ք և դարձի՛ եկե՛ք»* (Գործք 3:19):

Ապաշխարությունը մտքերի և վարքի լիարժեք փոփոխություն է, ինչն արտահայտվում է մարդու կենսակերպի փոփոխությամբ (մարդը դատապարտում է իր մեղքերը, ինքնակամությունը և իր մեղավոր բնությունը): Աստվածաշունչն ասում է, որ ապաշխարությունը Աստված է տալիս (տե՛ս Գործք 11:18, Բ Տիմ. 2:25) հարություն առած և համբարձված Քրիստոսի միջոցով (հմմտ. Գործք 5:31): Ապաշխարությունն ընթացք է, որը պտուղներ է բերում, քանի որ դրան ուղեկցում են *«ապաշխարության արժանի գործերը»* (Գործք 26:20, տե՛ս նաև Մատթ. 3:8): Ապաշխարության նպատակը *«կյանքն է»* (Գործք 11:18) և *«փրկությունը»* (Բ Կորնթ. 7:10):

Պողոս առաքյալը ցույց տվեց ապաշխարության հիմնական էությունը՝ ընդգծելով, որ այն Քրիստոսին հավատալու հետ մեկտեղ դրված է յուրաքանչյուր հոգու փրկության հիմքում. *«Եվ թե՛ ինչպես ոչ մի օգտակար բան ետ չպահեցի... հրեաներին, ինչպես և հույներին վկայություն տվեցի՝ Աստծո առաջ ապաշխարել և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ»* (Գործք 20:20-21):

Քաղված

## Վանաձորը՝ ուշադրության կենտրոնում

*«Եվ սասց նրանց. «Ձեր գործը չէ իմանալ այն ժամերն ու ժամանակները, որ Հայրն Իր գործությամբ հաստատեց: Բայց դուք գործություն պիտի ստանաք, երբ Սուրբ Հոգին ձեր վրա գա, և Իմ վկաները պիտի լինեք և՛ Երուսաղեմում, և՛ սամբոջ Հրեաստանում, և՛ Մամարիայում, և՛ երկրի ամենահեռավոր ծայրերում»* (Գործք 1:7-8):

Բոլորս հիշեցումների կարիք ունենք, ինչպես այն մարդիկ, ովքեր ամենամոտն էին Տեր Հիսուսին մինչև Նրա համբարձումը:

Ձեր գործը չէ իմանալ՝

- Ժամերը (chronos). Ժամանակի տևողություն կամ ժամանակագրություն, ինչպես մենք գիտենք:
- Ժամանակները (kairos) - ժամանակը չափելու չափանիշ:

Այս երկու բառերը (ժամերն ու ժամանակները) ընդգրկում են ժամանակի հայեցակարգը, դրա իրականությունը և եզակի հարթությունը որպես Ստեղծագործողի կողմից մեզ տրված նվեր, որը պետք է գնահատենք:

Տեր Հիսուսը բացարձակ հստակությամբ ասում է, որ ժամերն ու ժամանակները չպետք է մտահոգեն աշակերտներին: Նրանք պետք է լինեն Նրա վկաները երկրի ամենահեռավոր ծայրերում:

Մեր Տիրոջ եզրափակիչ խոսքերը պետք է հնչեն մեր մտքում և շարունակեն ուժ հաղորդել մեր էության յուրաքանչյուր մասնիկին, մինչ ձգտում ենք ապրել երկրի վրա Նրա համար:

Փառք ենք տալիս Տիրոջը, որ Հայ քրիստոնեական առաքելության միջոցով Ավետարանը հասնում է Հայաստանի տարբեր վայրեր, նաև Հայաստանից դուրս:

Աշխատանքներից մեկը, որն ուզում ենք առանձնացնել, Վանաձորն է՝ Հայաստանի 3-րդ ամենամեծ քաղաքը: Այն գտնվում է Երևանից մոտ 130 կմ դեպի հյուսիս:

Խորհրդային ժամանակաշրջանում այն ծաղկուն քաղաք էր և հայտնի էր իր քիմիական գործարաններով: Յավոք, 1988թ.-ի երկրաշարժը մեծ հարված հասցրեց Վանաձորին և շրջակա բնակավայրերին: Այդ աղետի ազդեցությունը տեսանելի է մինչ օրս: Մեր միսիոներական տարեկան ճամփորդությունների շնորհիվ շատ հավատացյալներ տեղեկացվում են այնտեղ բնակվող սիրելիների ծանր վիճակի մասին:

Նոր Չեղանդիայի մեր սիրելի եղբայրների ֆինանսական աջակցությամբ կարողանում ենք հասնել շատ ընտանիքների արդեն ավելի քան տասը տարի:

Մեր հավատարիմ աշխատակիցները՝ Աշոտը և նրա կինը՝ Հասմիկը, շարունակում են ամեն ամիս այցելել ընտանիքներին՝ խորհրդատվության, աղոթքի և նվերներ բաժանելու համար: Բազմազավակ շատ ընտանիքներ դեռ ապրում են մետաղյա տնակներում, որտեղ չկան ջուր, գազ և առաջին անհրաժեշտության այլ պայմաններ: Ավելին՝ այս տնակների զգալի մասի տանիքներն ու պատերը վնասված են: Ընտա-

նիքներն ապրում են «դոմիկներում»՝ ամռանը բարձր ջերմաստիճանի պայմաններում, իսկ ձմռանը՝ ցածր ջերմաստիճանի պայմաններում:

Հաճախ մեր խնամակալության տակ գնտվող ընտանիքներին անհրաժեշտ է ֆինանսական լրացուցիչ օգնություն՝ բժշկական շտապ միջամտության և դեղորայքի համար: Որպես կազմակերպություն՝ մենք պայքարել ենք այս լրացուցիչ կարիքները բավարարելու համար: Միայն Նրա շնորհով կարողացել ենք օգնության ձեռք մեկնել մինչ օրս:

Ավետարանի պատգամը շարունակում է տարածվել Աստվածաշնչի ուսումնասիրությունների միջոցով թե՛ տներում, թե՛ տոնական խմբակներում, թե՛ տարբեր հաստուկ միջոցառումների ժամանակ:

Աստղիկը՝ ACM-ի մեր աշխատակիցներից մեկը, Վանաձորում մանկավարժությամբ է զբաղվում: Նա ունի 7-12 տարեկան երեխաներից բաղկացած երեք խումբ և 13-15 տարեկան պատանիների խումբ: Մեր քույրն այս տարիքային խմբերում Ավետարանի բարի լուրը տարածելու մեծ փափագ ունի: Մենք շարունակում ենք բարձրացնել մեր հավատարիմ ծառայակիցներին և կամավորներին, ովքեր պատրաստակամորեն և ուրախությամբ են տարածում հույսի պատգամը:

Մենք գնահատում ենք ձեր աղոթքներն ու գործնական աջակցությունը մեր ծառայության հատուկ ոլորտում: Մեր սրտի փափագն է, որ այս տարածաշրջանում շատերն իրենց կյանքը նվիրեն մեր Տիրոջը և Զրիստոսին:

Դոկտ.՝ Դանիել Ջեյմս